ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տնտեսական եւ Բնական

ԳԻՏԵԼԵԱՑ

ԺԲ. ՏԱՐԻ. ԹԻՒ 13. 1854 ՅՈՒԼԻՍԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԲՆՈՒԹԻՒՆ

Ծառ :

Երկար աշխատանքէ կամ ձամբէ դադրած, կամ սրտի ալէկոծութեան ցածնալու ատեն, ինչ անուշ հանգստարան և ապաստան է ծառ մը։ Դուն շունչը՝ հովը՝ իբրև մագնիսէ մը կը ձգուի՝ ի ծառ, կը խառնուի անոր մազոտ ճիւղերուն մէջ, և դաշնակաւոր ձայն մը կը ձգէ, որ երաժշտութեան նման բառ չունի, բայց կը հասկըցուի, բաւական է թէ մէկը իմացած ըլլայ քիչ մը սրտի և արտաքին բնութեան կապակցութիւնը։

Այրբ երեկոյեան հովը կ'ելլէ իր զով պահարանէն, և մենաւոր ծառին հետ կը խառնուի, որ իր տերևաշար ճիւղերը չորս դին տարածած իբրև թեւերուն թափ տալով կը հրաւիրէ զքեզ իր երկընցած շուքին ներքև պահ մը կանգ առնելու, մ'արհամարհեր այդ բազմոցը, եկ գնա նիստ հոն. տես ինչ անուշ է այդ անչար տերևոց շշշիւնը, տես ինչ նազով կը շարժին այդ կանաչ ողկուզանման թեւերը։ Լսանչ դիր այդ ձայնին, և լսէ սրտիդ ու մտքիդ. հովն և ծառ անիմաստ են, անբան են, բայց սիրտ ու միտք կ'իմանան անոնցմէ վայելչութիւն և զուարճութիւն։

Պտղաբերանաւոր արարածոց մէջ ա-

մենէն մեծը ծառն է. անշնչից մէջն ալ ամենէն կատարեալն ինքն է. երկրիս երեսի ամենէն գլխաւոր վայելչութիւն ծառն է. և բնութեան տաճարին սիւները ծառերն են, որոնց թեւերը իրար խառնուած՝ անթիւ և մէջէ մէջ կամարներ կը կապեն. ուսկից մարդիկ ալ սովրած են իրենց շէնքերուն սիւները, կամարները, ձեղունները ձեւացընելու. թերևս հիմերն ալ. վասն զի ինչպէս մեծամեծ շէնքերու բարձրութենէն քիչ պակաս խոր և ամուր հիմեր կը ձգուին, այսպէս մեծ մեծ ծառերն ալ հողին տակ գրեթէ իրենց դրսի մեծութեան չափ խոր և լայն արմատ կը տարածեն, որ դրսի ծանրութիւնը կարենան վերցընել և փոթորիկներէն չփրթիին, չխլուին։

Այս ծառերուն երկակենցաղ կեանքը, այսինքն կէսը երկրիս վրայ օդուն մէջ, կէսը երկրիս տակ հողուն մէջ ապրիլը, իրենց ահեղ խորութիւնը և բարձրութիւնը՝ որ երբեմն մեր սովորական տուներէն և աշտարակներէն բարձր կ'ըլլան. ճիւղերուն չորս դին տարածուիլը ախորժելի շուքով մը, և անոնց տերևոց տարուէ տարի նորոգուիլը, կամ դարէ դար անթափ անմաշ մնալը, անոնց հովերուն հետ խառնուած ձայնը, ճղերուն վրայ թառած թռչնոց բոյները, և հեռաւոր աշխարհաց հաւերուն հիւրատուն ըլլալը, և մանաւանդ անոնց հարիւրամեայ և հազարամեայ դարերով ապրիլը, որոնց շուքին տակ երբեմն ետևէ ետև երեսուն, քառասուն, յիսուն և այլ աւելի ազգեր նստած և անցած են, այսինքն այնչափ ցեղ մարդկան որդիէ որդի ծնած և մեռած են, մինչդեռ նոյն մէկ ծառը դեռ կեցած կ'ապրի, հազար կամ երկու և երեք հազար տարուան կեանքով. և անոնց տուած պէսպէս օգուտները թէ՛ մարդկան և թէ անասնոց. ասոնք ամէնը մէկ տեղ եկած՝ ամէն ատեն յափշտակեր են մարդկանց միտքը ծառերուն վրայ մեծ զարմանք մը ձգելու։ Այնմէն հին ազգաց մէջ կը տեսնուի այս ծառոց յարգութիւնը, երբեմն չափազանց ալ. իրենց ատեն դեռ ծառերը հազարաւոր տարիներու հնութիւն չունէին. բայց մարդկութիւնն ալ դեռ չունէր իր ցեղացեղ հնութիւնը, մանաւանդ թէ ինքը միշտ նոր էր քան թէ ծառերը. և ինչպէս որ բնախօսից ոմանք կ'ըսեն, ջրհեղեղով ալ չապականեցան շատ ծառեր, այլ դարձեալ տերևեցան. և թերևս նորեկ մարդիկ յիշելով իրենց հին նախնեաց կեանքը այն ծառերուն ներքև, և միայն զանոնք տեսնելով վկայ և արձան անցած ժամանակներու և ազգերու, խորին սոսկում և սէր մը ձգեցին այն ծառոց վրայ. ոմանք այս կրից սաստկութեամբ սկսան ծառոց պաշտօն մատուցանել. ոմանք ալ չափաւորելով իրենց զգացմունքը՝ բայց ոչ բոլորովին մարելով՝ իրենց ուղիղ պաշտօնն ալ ծառերուն քով կը մատուցանէին։

Ասորք Պրոց մէջ ինչուան Քրիստոսէ 2000 տարի առաջ կը յիշուին նշանաւոր ծառեր, ինչպէս Թամբրէի կաղնին, Միկիմայ բևեկնին, և մեր աղգին մէջ ալ Երմաւրայ սօսիները՝ Թամբրէի կաղնիէն ալ հին, որոնց մէջ նուիրուած և մեծցեր էր Նուշաւան Երայ նահապետին թոռը ասկէ 3800 տարի առաջ, և իր իշխանութեան ատենն ալ իր ապարանից դրան քով տնկուած սօսիներուն ձայնով կը զմայլէր սրբազան զգացմամբ մը. այդպիսի զգացմունքը թէ և տկարացած՝ դեռ կը գտուի ազգերնուս մէջ, ինչպէս ուրիշ ազգաց ալ, որ մեծամեծ ծառերուն վրայ բան մը կը կապեն կամ կը ձգեն, բարոյ փափագով։ Այս ծառապատուութիւնը որ վերջը ծառապաշտութիւն դարձաւ կամ՝ ծառագոթի մոլորութիւն, ինչպէս կ'ըսէ մեր հեղինակաց մէկը, Աղուանից մէջ խորհրդական կրօնից մաս կը սեպուէր. Անոնք հին կաղնիներու տակ իրենց աստուածը կը պաշտէին, և ձիու արիւնով զանոնք կ'ոռոգէին, զոհած ձիոց գլուխն ու կաշին ալ ծառոց վրայ ձգելով. Պարսից և Պարթևաց մէջ անուանի էին իրենց Պանդիատ քաջին նուիրական ծառերը, Պաւալան լերանց մայրերը, որոնց վրայ բիւր առասպել

ալ կը զրուցէին, ինչպէս Յոյնք ալ իրենց հերակլեան սոճիներուն, կեկրոպեան և աթենեան ձիթենիներուն, անտիոքեան դափնիներուն, և այլն։ Հին Պաղեստացւոց կամ Կելտաց գրեթէ բոլոր կրօնքը և վարդապետութիւնը իրենց հին կաղնեաց ներքև կը կատարուէր. հոն էին իրենց տաճարը, դպրոցը և ատեանը։ Արգարէք ստէպ կը յանդիմանեն զՀրեայս իրենց դրացի ազգաց հետ ծառերուն տակ զոհ ընելնուն համար, և Իրանանու մայրեաց մեծ յարգութիւն տալնուն. այս մայրեաց ոմանք որ երկու իրեք հազար տարուան պաշտօն ընդունած են, ինչուան հիմա ալ ողջ կեցած են։ Հիմակուան կուապաշտից շատը՝ ինչպէս Հնդիկք, Յաբոնացիք, նման հին ազգաց՝ իրենց մեհեանները ծառով շրջապատած կամ անտառներու մէջ հաստատած են։ Եւրոպայի ազգաց նախահարք բոլորն ալ ծառոց պաշտօնասէր եղած են. մէկ խօսքով գրեթէ ամէն ազգ ալ այս պաշտօնն ընծայած է ծառերու, և դեռ Աֆրիկէի և ովկիանական կղզեաց մէջ ծառապաշտ ժողովուրդներ կան։ Յոյնք անտառաց աստուածներ ունէին դրիւդ անունով, և ինչուան ամէն մէկ ծառի մասնաւոր աստուածն ալ կար, որ համադրիւդ կ'ըսուէր. շատ ծառեր մէկ մէկ աստուածոց նուիրուած էին, շատ ծառեր ալ կը կարծուէին որ երբեմն մարդ էին՝ և 'ի ծառ փոխուեցան։

Ինչափ խոր կամ մերձաւոր է այս ծառոց ազդեցութիւնը, որ Աշմարիտ հաւատացեալք ալ անոնցմէ չեն հեռացած. ինքն իսկ հայրն հաւատոց Աբրահամ, որ երբեմն Ամբրէի կաղնիին քով կը հանգչէր տեսիլք տեսնելու, ուրիշ տեղ "Տնկեաց տունկ առ ի Բրհորոնին Արդման, կ'ըսէ Ս. Գիրքը, և կարդաց անդ զանուն Տեառն. Աստուած յաւիտենական". շատ բնական բան էր Աբրահամու ըրածը. վասն զի իրեն պէս վրանաբնակ տանուտէր մը չէր կրնար ոչ հաստատուն տաճար մը շինել ոչ շարժական, պէտք էր որ այսպէս ծառերու մէջ կատարէ իր պաշտօնը, և ուր որ չկար՝ ինքը տնկէ. իրմէ առաջ աստուածապաշտ նահապետքն ալ ուր կը կատարէին իրենց պաշտօնը։ Աւ միթէ ծառերուն այսպիսի խորհրդական յատկութեանը աւելի հին գաղափար մը չէ՞ն ընծայեր տապանին աղաւնոյն բերած ձիթենւոյ ճղիկը, և Աստամոյ դրախտին մէջ՝ կենաց, գիտութեան և ծածկութեան ծառերը։ Հին Հայկազանց համար կ'ըսէ պատմիչը, և անոնց հետ իմանալու է ուրիշ հին ազգերն ալ, թէ "Օ սաղարթուցն սօսաւիւն ընդ հանդարտ և սաստիկ շնչելոյ օդոյն ևեթ ոստոց շարժումն, սովորեցան 'ի հմայս յաշխարհիս Հայկազանց, և այս ցբազում ժամանակս". բայց նոյն իսկ Աշմարտութիւնն ալ երբեմն զինքը իր հաւատարմաց յայտնելու յարմար տեղ երբեմն ձայն ձգած կամ անձայն ծառերը կը սեպէր, ինչպէս Պաւթի ատեն', Աբրահամու ատեն, Մովսիսի ատեն մորենւոյ մը մէջ, և նոյն իսկ դրախտին ժամանակը կէսօրուընէ ետև հովուն ատենը կու գար Աստուած իր ձեռակերտ մարդուն հետ խօսելու, ինչպէս որ կը թարգմանուի Աբրայեցւոց, Ատինաց և ուրիշ ազգաց մէջ "ձայն գնալոյ Տեառն'ի դրախտի անդ ընդ երեկս" ըսուածը։ Պէտք է արդեօք յիշել, որ Աշմարիտ հաւատացելոց մէկ հատիկ պատուելի նիւթն ալ՝ ծառէ առաջ եկած է, խաչափայտն, Աստուծոյն աստուածոց հանգստարանը և նշանը. վասն զի "Երհնեալ է փայտն որով լինի արդարութիւն"։ Գրեթէ ամէն մոլորութիւն Աշմարիտ սկզբան մը յիշատակով խառնուած է. մոլար սկիզբն ալ թողլով շատ արտաքին սովորութիւններ հասարակ են ամէն կրօնքի և ազգաց. թէ մեհենեաց և թէ եկեղեցեաց քով ծառ տնկել, թէ անտուրբ և թէ տուրբ գերեզմաններ ծառով զարդարել հասարակաց ազգաց սովորութիւն է. թերևս մեր նախնիք կը կարծէին՝ թէ մեռելոց հոգիքն այն ծառերուն ծայրը հովերուն հետ կը շշնչեն. ինչուան ոմանք մեռել-

1 Տես երես 89։

նին ալ ծառերուն վրայ կը ձգէին։ Ամերիկայի Հնդկաց մէջ կան ժողովուրդներ, որոնց քով կը տեսնես որ ծառէ մը կախուած են իրենց նորածին տղայոց որորանները, քովի ծառէն ալ իրենց հին ծնողաց տապանները. հովը զերկուքն ալ կը շարժէ, բայց մէկը ինչ շուտ և անոյշ, մէկալն ինչ ծանր և ուշ...։ Մերևս հոս աւելի զարմանալին ալ այս է, որ որորանն ալ տապանն ալ դարձեալ նոյն նիւթէն, ծառի մը ճիւղէ կամ փայտէ են։

Այսպէս ծառը թէ և չափազանց պատիւ և պաշտօն ընդունած է, բայց կրնայ ըսուիլ թէ մարդկանց ալ անչափ պաշտօն և պիտոյք կու տայ. կենդանութեան ատեն գեղեցկութիւնը, շուքը, պտուղը, պաշտպանութիւնը և սընունդը. անկենդանութեան ատեն, այսինքն կտրուելէն վերջը՝ հազար ու մէկ բանի կու գայ տնտեսութեան մէջ, թէ վառելու, թէ շէնքի, թէ զարդի, թէ գործեաց, թէ ճանապարհի՝ կառք և նաւ ըլլալով, թէ մշակութեան դիւրութեան, և այլն և այլն. "Երբեմն „ գերակայ գոլով սպասաւորէր պտղով „ կենդանաբոյս ելով աճական մարմինն, „ կ'ըսէ Պագիստրոս, այժմ անաճիցն „ պատկանեալ՝ հաւանի ստորակայիլ. „ և որ երբեմն 'ի բարձանց կերակրէր՝ „ այժմ ստորակայեալ առաւել հպատա„ կեալ արքանեկէ. 'ի մահուանն իւ„ րում վեհագոյն՝ քան մինչ դեռ տա„ կաւին կենդանին է „։ Այսպէս ծառը իր կենդանութեան ատեն մեր բնակարանէն դուրս ամենէն գեղեցիկ և օգտակար զարդն ըլլալով, մահուընէն ետև ալ բնակարաններնուս մէջ ամենէն օգտակար նիւթն և զարդը կ'ըլլայ. և չկրնար քանուկ միտք մը տեսնելով աթոռ մը, գրասեղան մը, մահիճ մը, տուփ մը, մնտուկ մը, և այլն, չյիշել որ քանի մը տարի կամ դար առաջ՝ այն փայտը պարտիզաց կամ դաշտաց կամ անտառաց հովանատու ծառ մըն էր, և ո՛ գիտէ ինչ դիպուածներ ունեցեր է իր ներքև։... Այց թողլով այդ կերպարանափոխ վիճակը՝ դարձեալ առաջին կենդանի կերպարանաց մէջ դիտէ զծառը, և տես որչափ բանի կը յարմարի մարդկային պիտոյից և կրից յարմար։

Ահա անտառի ծառեր, քաղաքաց պաշտպանութեան և պիտոյից համար, գաղանաց դադար ըլլալու համար, հեռուէն տեսք և զուարճութիւն, մօտէն շուք և վախ տալով. ահա պատի ծառ, պարտիզի ծառ, հովանոց ծառ, պտղի ծառ, ճեմելեաց ծառ, հանգստեան ծառ, յիշատակի ծառ, մահուան ծառ։ Ուրախութիւնն ալ իր ծառն ունի, տրտմութիւնն ալ իրենը, և թերևս յիշատակաց նշաններուն մէջ ամենէն գեղեցիկ և յարգին է ծառը, որ մէկ քաղաքական դիպուածի մը, կամ բարեկամաց հանդիպման, կամ մէկուն ծննդեան կամ մահուանը համար տընկուած է։ Հիներն ամէն ծառ և ծաղիկ մէկ կրքի մը յարմարցուցեր էին, անանկ որ ծառի մը անուն կամ պատկեր խօսք մը կամ դէպք մը կը յայտնէր. այս այլաբանական լեզուն ուսմամբ չգիտցողն ալ՝ ամէն ծառէ իր զանազան դրքին մէջ մէկմէկ զգացմունք կրնայ ունենալ։ Ախ ծառոց հին երևոյթն և դալար դէմքը մարդուս զանազան հասակաց գեղեցիկ օրինակ են. իրենց ձևը և կերպարանքը՝ ողորկ կամ խրթնի՝ գեղեցկութեան և տգեղութեան օրինակ. բերքերնին աղէկ կամ անօգուտ՝ բարուց օրինակ. թէ որ ինքնաբոյս են տեղ մը՝ բնութեան մայրենի խնամքը կը ցուցնեն, թէ որ մարդատունկ՝ զանազան պատճառներ և կենաց հանգամանք կը յիշեցընեն։ Աղցր է բարեկամութեան ծառը, եռանդուն է ժողովոց կամ ընկերութեան ծառը. ծանր ու վսեմ այն ծառը՝ որուն ներքև ծերունիք կամ դատաւորք կը ժողովին. պատկառելի միանգամայն և ահաւոր այն ծառը որ ատենօք պաշտօն ընդուներ է, և թերևս պժգալի զոհերու արիւն ալ խմեր է. փափուկ է յուսոյ նման ծառը, որ տղու մը աշխարհք գալուն տարին տնկուած է, տխուր է այն՝ որ մէկի մը աշխարհքէ ելլելը կը նշանա-

կէ. արցունք կ'ուզէ գերեզմանի մը քով կանգնուած նոձը, կամ հողաբլրակի մը վրայ կախուած ուռենին, որոնց շարժուն և փոփոխ շուքերը իրենց ներքև քնացողին աւելի շարժուն և փոփոխ կեանց շուքը կը յիշեցնեն։ Ամենքը մէկ մէկ յիշատակ և ազդմունք ունին՝ ամենքն ալ ախորժ։ Սակայն Թերևս աարբեխառն և փորձ մարդու մը համար՝ ամենէն ախորժելին է միայնութեան հին ծառը, որուն երբեմն երբեմն այց ելլէ քննելու բնութեան ընթացքը և իր ընթացքը բնութեան մէջ, կամ անգիր մտածութեամբ, կամ խոհական գրքով մը. իր յենարանը չորս հինգ հարիւր տարուան բունն է, ծածքը այն ծածքն է որ հազարաւոր եղանակներով ծածկուեր և մերկացեր է, սփռոցը այն շուքն է՝ ուր Թերևս իրմէ առաջ տասը քսան ազգ նստեր ելեր են. Թերևս հոն ուրիշ կրօնքներ և լեզուներ լսուեր են, Թերևս տնկողը հիւսիսային ձեռք մ'էր, ոռոգողը հարաւային բնակիչը, և ժամանակաւ կտրողը պիտի ըլլայ արևմտեան ազգ մը. ամենքը հոն իրենց ժամանակին զանազան դէպքերը կը յիշեն, բայց գրեթէ ամենքն ալ նոյն և նման կրից զգայմունքներ։ Այն ծառին ներքև նստողը պէտք է քիչ մը անցեալ ժամանակաց պատմութիւն գիտնայ, ևս առաւել ինքն իր կեանց անցեալ և ներկայ վիճակն ունենայ, և բաղդատէ ընդհանուր մարդկութեան հետ։ Այն ծառին լուռ ազդմունքը իմանալու համար՝ պէտք է ունենալ սիրտ մը ոչ շատ ծեր և ոչ շատ մատաղ, ոչ շատ ողջ և ոչ շատ մեռած. հապա ողջութեանը մէջ քանի մը խոր վէրքեր ալ. և կայ հասուն հասակով զգայուն և բարեմարդ անձ մը՝ որ այդ վէրքերէն չունենայ։ Երբ մարդկութիւն մարդկութեան դէմ կը պատերազմի, երբ բռնութիւն ոկարութեան վրայ կ'անգթանայ, կաղելի է զգալ և իբրև անզգայ մնալ։ Երբ ամէն դի կռուի ձայն կայ, պէտք է զգայուն սիրտն ալ զրահաւորի. բայց զրահաւոր և ոչ սպառազէն. զէնք ալ ունի՝ բայց պաշտպանուելու և ոչ յարձակելու. և երբ հարկը կը ստիպէ կամ վէրք տալ կամ առնուլ, աւելի կ'ընտրէ ետքինը. բարքը և հաւատքը անարատ պահելով՝ անգթութենէ կամ անզգուշութենէ առած վէրքերն ալ՝ իրեն պատուոյ և մխիթարութեան ծածուկ նիւթ կը գտնէ։ Ո՜հ, ինչպէս անուշ և վսեմ է կրած սիրտը և կրթուած միտքը հինաւուրց ծառի մը անմարդաձայն մենարանին մէջ։.. Ի՜նչ օգտակար և պիտանի խրատներ կը լսէ հոն՝ ուր թռչնոյ մ'ալ ձայն չհասնի, բայց եթէ հազիւ հեռի և յետին վանգ մը։ Ո՜րչափ աւելի իմաստասէր, մանաւանդ թէ իմաստագէտ կը դառնայ մարդ՝ միայնութեան ծառին լուռ հովանիներէն։

Հ. Ղ. Ալ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Երուսաղէմայ Էլ-Հարեմ մզկիթը։

Տաճկաց երևելի մզկիթներուն մէջ Մեգգէի մզկիթէն վերջը Երուսաղեմայ Էլ-Հարեմ (Տուն Աստուծոյ) ըսուածն է՝ զորն որ իրենց երկրորդ խալիֆան, որ է Մէհմետին յաջորդը Օմար Ա, կանգնեց։ Օմար Երուսաղեմայ տիրելէն վերջը՝ քրիստոնէից պատրիարգէն մէկ պատշաճաւոր դիրք մը ուզեց որ ցուցնէ իրեն մզկիթ շինելու համար. պատրիարգը քաղքին արևելեան կողմը Միլոէ և Յովսափատ ձորերուն վրայ լերան գագաթը ցրցուց, ուր որ երբեմն Սողոմոնի տաճարը կանգնուած էր. և Հերովդէս յարդել շտկել տուած էր Սողոմոնի տաճարը երկրորդ անգամ նորոգելու ժամանակը. զորն որ վերջը Տիտոս, Վեսպասիանոսին որդին, հիմնայատակ կործաներ էր. և այն ժամանակէն մինչև Օմարին ատենը մնացած էր ընդարձակ դաշտավայր։ Այն տեղը կանգնեց Օմար այս մեծակառոյց շէնքը. դիրքը խիստ զբ-